

**ՄԱՐԹՆ ՈՒ ԿՆԻԿԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
բարբառ (խոսվածք)**

Մի մարթ ու կնիկ են ըլըմ: Դրանք շատ սերով, խելոք ու համեստ են ըլըմ: Էդ մարթը տենըմ ա, որ չիմն էլ իրանց կնանոնցը ծեծըմ են, կովըմ են, հմա դրանք տհե սերով են:

Գալիս ա կնգանն ասըմ.— Կնիկ ջան, մենք էս ինչքան լավ մարթ ու կնիկ ենք, որ ուրըշնուն տենըմ եմ, սիրտըս խառնըմ ա:

Ասըմ ա.— Մարթ ջա՛ն, կնիկը որ գեշ ըլի՝ մարթն էլ գեշ կլի:

Ասըմ ա.— Չէ՛, այ կնիկ, գեշութիւնը մարթիցն ա, մարթը որ գեշ ըլի, կնիկն էլ գեշ կլի:

Նա ասըմ ա.— Մարթիցն ա, մարթը ասըմ ա՝ կնգանից ա: Վերչը կնիկն ասըմ ա.— Այ մարթ, խու էսքան մենք իրար հետ սերով ենք, հմա էս որ գեշութիւնն ուզենամ, կարող ա էքուց էվետ ուրըշի սիրեմ, քեզ գժվացնեմ՝ չուերն ընգնիս:

Ասըմ ա.— Կարալ չես, սիրտ չես անիլ:

Ասըմ ա.— Լա՛վ:

Դրանք ունենըմ են մի չալ կով, մարթն էլ լավ չերքեզի հագուստ ա ունենըմ, սապոքնի, փափախ:

Էդ կնիկը գնըմ ա մի սիրեկան ա բռնըմ, ասըմ ա.— Կգնաս իմ մարթի շորերի նման շորեր կարիլ կտաս, սապոք, փափախ կարիլ կտաս, մի հատ էլ մեր չալ կովի նման կով կառնիս:

Էդ բոլորը դրան պատրաստիլ ա տալի, ինքը գնըմ ա դասաբի կուշտը, ասըմ ա.— Իմ կովը մարթիս հետ դրգըմ եմ, 300 մանեթով կբարըշես, կովը վեր կունիս, մարթիս փողը կտաս, կդրգես:

Ասըմ ա.— Լա՛վ:

Հմի էլ գնըմ ա սապոժնրկի կուշտը, ասըմ ա.— Իմ ոտով մի ջուխտ ոտնաման կարե, մարթըս կգա, վաղը կտա, կբերես:

Ասըմ ա.— Լա՛վ:

Հըմի էլ գնըմ ա դերցակի կուշտը, մի կաստում ա գակագ տալի, ասըմ ա.— Մարթս կգա, փողը կտա, կբերի:

Հմի էլ գնըմ ա սհաթ շինողի կուշտը, մի սհաթ ա գակագ տալի, ասըմ ա.— Մարթս կգա, փողը կտա, կբերես:

Ասըմ են.— Լա՛վ:

Գալիս ա տուն, սիրեկանին ասըմ ա.— Տար կովըդ տուր ֆլան դասաբին, փողը կտա՝ էս բարըշել եմ, դու բան չի խոսաս: Կտանիս հարիր մանեթ կտաս սապոժնրկին, մի ջուխտ ոտնաման կտա, կբերես: Ֆլան դերցակի կուշտը կգնաս, հարիր մանեթ էլ նրան կտաս, կաստումը կտա, կբերես: Սհաթ շինողին էլ հարիր մանեթ կտաս, սհաթ եմ գակագ տվել, կտա՝ կբերես:

Ասըմ ա.— Լա՛վ:

Եդնա իրա մարթին էլ ա նույն բաները պատվիրըմ: Սիրեկանը մի քսան ոտն աղաք ա ընգնըմ, կովը տանըմ, մարթն էլ իրա կովն ա տանըմ: Էդ մարթը տենըմ ա, որ իրա նման մի մարթ, իրա կովի նման մի կով աղաք արած՝ տանըմ ա:

Ասըմ ա.— Այ մարթ, թե ասեմ՝ նա էս եմ, բա ե՞ս ով եմ:

Էդ մարթը միտելի միտկն ա անըմ, ասըմ ա.— Հլա գնամ, թե էս մարթն էլ կովը տարավ իմ կնգա բարըշած դասաբի կուշտը, ուրեմը նա էս եմ, ես՝ ով ա գիդըմ ով եմ, թե ուրիշ տեղ կտանի, ուրեմը ես՝ էս եմ, նրա հերն էլ անիծած:

Գնում են հասնում, սիրեկանը կովը տանում ա դասաբին տալի, ասում ա.— Իմ կնիկը կովը դրգել ա, փողը տվեք:

Նրանք անխոսալ փողը տալիս են:

Էդ մարթը մտկումն ասում ա.— Ուրեմը նա ես եմ, ես, ով ա գիդըմ, ով եմ, իմ հերն էլ անիծած:

Ինքն էլ հլե նհե կովը բրախում ա, էդ մարթի եղնա գնում ասում ա.— Հլա տենամ, թե հաստատ գնաց սապոժնրկիցն էլ ոտնաման վերցրուց, ուրեմը նա՝ ես եմ:

Սիրեկանը գնում ա սապոժնրկի կուշտը, հարիւր մանեթը տալի, ոտնամանը վեր ունում, գնում:

Դա ասում ա.— Ուրեմը, նա ես եմ:

Տենց էլ գնում ա կաստումն ու սհաթն առնում, էդ մարթն ավելի համոզվում ա, որ նա՝ ինքն ա, ինքը՝ հեչ: Հմա եդ եղնեն ա ընգնում, գնում ա, ասում ա՝ Բալքի մեր տուն չի գնում, հլա գնամ:

Գնում ա թուշ իրանց տուն:

Կնիկը դուս ա գալի, սիրեկանի ճտովն ընկնում, ասում ա.— Մարթ ջան, զակագ տվածնիս լավն ե՞ն, բերի՞ր, աչող անց կացա՞վ:

Ասում ա.— Հա՛ կնիկ ջան, լավն են:

Էս մարթը որ էս էլ տեհավ, ավելի համոզվեց, որ նա՝ ինքն ա, ինքն, ով ա գիդըմ, ո՞վ ա: Էլ ըմանլում ա իրա տուն գնա, ասում ա.— Գնամ՝ վայ թե տանից դուս անեն, ասեն՝ ո՞վ ա էս դարիք մարթը, լավն են ա՝ մի տեղով գնամ:

Դա գլուխն առնում ա, ըտիան հեռանում: Մութը վրա ա հասնում, հմի էդ մարթը գիդե ոչ, թե ո՞ւր գնա, ի՞նչ անե, մնացել ա մոլորված:

Ասում ա.— Հլա գնամ նրանց ասեմ, բալի էս քշեր տեղ տան քնելու:

Գնում ա դուռը ծեծում, կնիկը դուս ա գալի:

Ասում ա.— Քույրիկ, էս քշեր տեղ չեք տա՞լ, դարիք մարթ եմ:

Ասում ա.— Համեցեք, դռնախն աստծունն ա:

Էդ մարթը տուն ա գնում, տենում ա՝ չիմ իրան տեհածին, իրա առածնին, իրա տունը: Եդ մտկումն ասում ա.— Հլբաթ ինձ թվում ա, ով ա գիդըմ ես կամ, թե՝ չե:

Կնիկը բերում ա մի չուլ ա տալի՝ տակն ա գցում, մինն էլ վրեն ա գցում, գեղնի վրա քնում: Հմա քունը ե՞ փ կտանի: Կնիկը որ սիրեկանի հետ տեղն ա մտնում, դա ըմանչում ա, էրեսը շուռ ա տալի, չուլը գլուխը քաշում, քնում: Կնիկը որ տենում ա դա քնեց հա, գալիս ա շորերը վեր ունում, բերում հին շորերը կոխկին դնում:

Ըռավողը էդ մարթը զարթնում ա, տենում ա, որ հին շորեր են կշտին, ջլիզ համոզվում ա, որ ինքը մի դարիք մարթ ա, վեր ա կենում ու հեռանում: Դա գժվածի պես գնում ա, թե ո՞ւր՝ ինքն էլ չգիդե: Ընգնում ա չուլերը, գնում ա մի չոբանի ռաստ գալի: Չոբանի շները դրան վրա են տալի, որ տենում ա կծիլ տին, փետով տալիս ա մնի գլխին: Չոբանի ջիգրը գալիս ա, դրան մի լավ ծեծում ա, ասում ա.— Տո հայվան, չոբանի շանը կծե՞ծե՞ն:

Որ շատ ծեծում են, մեխկներուն գալիս ա, բրախում են, ասում են.— Դվորն էկել ես, դենն էլ գնա:

Դա ծեծված, ջարթված, յարալու եդ գալիս ա իրա դուռը:

Կնիկը որ տենում ա՝ մեխկը գալիս ա, տանում ա տուն, յարալու տեղերը փթաթում, տեղումը խտոր գձում, ասում ա.— Ո՞նց ես, ի՞նչդ ա ցավում:

Ասում ա.— Գիդեմ ոչ, գլուխս ա ցավում, մի բան էլա հսկանում չեմ:

Նոր կնիկն ասում ա.— Դու իմ մարթն ես, սա իմ սիրեկանն ա, հմի տենում ե՞ս, որ կնիկն ինչ ուզենա՞ կանե:

Հմա լավութիւնը համ կնգանից պտի ըլիլ, համ մարթից, էրկուսն էլ իրար պտին սիրիլ ու հարգիլ, որ ընտանիքն էլ կարքին ըլի, թե չէ— որ դու քու էշը քշես, ես էլ իմ էշը քշեմ, ես օրին

կընգնինք: Ով անխելք ա, նրա տունը կռիվ էլ կլի, ծեծ էլ, մարթ ջա՛ն, արի սրանից եղը իմ
ասածը դու լսէ, քու ասածը՝ ես: